Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱԿՈՒՆՔԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունք»-ում տպագրության ներկայացվող գիտամեթոդական հոդվածների տեխնիկական պահանջները.

Տպագրության ներկայացվող գիտամեթոդական հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:

Հոդվածները պետք է լինեն 6-15 էջի սահմաններում: Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:

Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝12, ձախից՝ 3սմ, աջից՝ 2-սմ, վերևից և ներքևից՝ 2 սմ, միջտողային հեռավորությունը՝1.5, թղթի ֆորմատը՝A4:

Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով: Հաջորդ տողում դնել հեղինակի(հեղինակների) կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը: Հղումները դնել տողատակում՝համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝նաև համարը) և էջը (էջերը):

Հոդվածի վերջում գրել բանալի - բառերը, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝50-60 բառի սահմաններում: Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail): Հոդվածներն ուղարկել akunq.ysuib@gmail.com և banber_ib@ysu.am էլեկտրոնային հասցեներով: